

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

24 Տեպտեմբեր 2019թ.

N 34 Ա

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 15-ի N 167-Ա որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Արցախի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի ուսումնասիրության համար անհրաժեշտ դաշտային աշխատանքների՝ ստորերկրյա ջրադրյունների գույքագրման, տեխնիկական վիճակի զննման, մոնիթորինգային դիտակետերի տեղերի ընտրության ապահովման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

- 1) Աշոտ Հարությունյան Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետ՝ խմբի ղեկավար
- 2) Գոհար Գրիգորյան նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման բաժնի պետ
- 3) Սերգեյ Քարամյան նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների կառավարման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար
- 4) Սուսաննա Ասրիյան նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կենսաբազմազանության և ջրերի ու մթնոլորտի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ

- | | |
|-----------------------|---|
| 5) Վարդիթեր Նարինյան | Նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների կառավարման բաժնի առաջատար մասնագետ |
| 6) Նարեկ Գյուրջյան | Մարտակերտի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 7) Ժիրայր Իշխանյան | Քաշաթաղի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 8) Մամիկոն Ներսեսյան | Քաշաթաղի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 9) Վարուժան Նասիբյան | Շուշիի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 10) Արտուր Գաբրիելյան | Ասկերանի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 11) Արամ Նարինյան | Մարտունու տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 12) Գագիկ Օհանյան | Հաղրուփի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ աշխատանքներն իրականացնել սույն թվականի մարտի 27-ից ղեկտեմբերի 15-ն ընկած ժամանակաշրջանում, կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին մինչև սույն թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին՝ ծրագրի արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ներկայացնել նախարարին մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

4. «Արցախի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի 2019 թվականի ծրագիր»-ի անմիջական վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի տեղակալ՝ Ալեքսանդր Գասպարյանին:

5. Նախարարության աշխատակազմի քարտուղարության պետին՝ հրամանը հասցնել նախարարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարին, բնապահպանական և ընդերքի պետական տեսչության պետին, բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետին, աշխատանքային խմբի անդամներին՝ իրենց վերաբերող մասով:



Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ